

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2015 N -Ն

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»
ԹԻՎ 7987-ԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՏԻՐԱՊԵՏՈՒՄՆ ՈՒ ՏՆՕՐԻՆՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 605-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը և 9-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» թիվ 7987-ԱՄ վարկային համաձայնագրի (այսուհետ՝ վարկային համաձայնագիր) շրջանակներում կառուցված շենքերի հանձնում-ընդունումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Վարկային համաձայնագրի շրջանակներում համայնքային ենթակայության բժշկական կազմակերպությունների համար կառուցված և դրանց տիրապետմանը հանձնած շենքերը՝ յուրաքանչյուրի սկզբնական արժեքով, նվիրաբերել համայնքներին՝ համաձայն N 1 հավելվածի, կառուցված շենքերը համապատասխան համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացնելու և շենքերում

բացառապես առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցելու նպատակով:

2. Վարկային համաձայնագրի շրջանակներում կառուցված և մարզային բժշկական կազմակերպությունների տիրապետմանը հանձնած շենքերը՝ յուրաքանչյուրի սկզբնական արժեքով, ամրացնել պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն N 2 հավելվածի, շենքերում բացառապես առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցելու նպատակով:

3. Վարկային համաձայնագրի շրջանակներում կառուցված և մարզային բժշկական կազմակերպությունների տիրապետմանը հանձնած շենքերը նվիրաբերել փակ բաժնետիրական ընկերություններին՝ համաձայն N 3 հավելվածի, շենքերում բացառապես առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Շիրակի մարզպետներին և համապատասխան համայնքների ղեկավարներին՝ մինչև սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված՝ նոր կառուցված շենքերը փակ բաժնետիրական ընկերություններին և համայնքներին նվիրաբերելը կամ պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացնելը՝ ապահովել շենքերի սեփականության իրավունքի գրանցումը Հայաստանի Հանրապետության անվանմամբ: Պետական գրանցումն իրականացնել համապատասխան մարզպետարանների միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին և Հայաստանի Հանրապետության կառավար-

րությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ գույքի և դրա նկատմամբ իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական գրանցումն իրականացնել՝ հիմք ընդունելով կառուցված շինարարական օբյեկտներն ընդունող և շահագործման հանձնող հանձնաժողովի ակտում նշված շենքերի մակերեսների չափերը և շենքերի արժեքները:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին եռամսյա ժամկետում, ապահովել վարկային ծրագրի շրջանակներում կառուցված շենքերը սույն որոշման N 1 և N 3 հավելվածներին համապատասխան փակ բաժնետիրական ընկերություններին և համայնքներին նվիրաբերելու և սույն որոշման N 1 հավելվածին համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացնելու վերաբերյալ պայմանագրերի կնքումը՝ պայմանագրում նախատեսելով, որ նորակառույց շենքերը պետք է օգտագործվեն բացառապես բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

7. Շահառու հանդիսացող փակ բաժնետիրական ընկերություններին, համայնքներին և պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ հաշվապահական ձևակերպումներն իրականացնել՝ հաշվի առնելով շենքերի մաշվածությունը:

8. Սահմանել, որ սույն որոշման 6-րդ կետում նշված պայմանագրերի կնքման և դրանցից ծագող՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը իրականացվելու է համապատասխան փակ բաժնետիրական ընկերությունների, համայնքների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
„.....“-ի N - Ն
որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղական համայնքին նվիրաբերել 47,585,488.00 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Հոկտեմբերի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղական համայնքին նվիրաբերել 51,283,573.98 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Բաղրամյանի 1 բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական համայնքին նվիրաբերել 46,572,516.60 ՀՀ դրամ արժեքով նորակառույց

շենքը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղական համայնքին նվիրաբերել 47,227,328.00 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ակնալիճ բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց գյուղական համայնքին նվիրաբերել 47,295,948.36 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Նորաբացի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու նպատակով:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղական համայնքին նվիրաբերել 49,625,145.46 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու նպատակով:

Ց Ա Ն Կ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ
ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերի Պտղնի գյուղական համայնքի «Վերին Պտղնու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 45,768,070.96 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք գյուղական համայնքի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 52,370,674.13 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ գյուղական համայնքի «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 48,999,486.09 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղական համայնքի «Նոր Խարբերդի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 47,009,469.80 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սայաթ-Նովա գյուղական համայնքի «Սայաթ-Նովայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 47,083,611.00 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

6. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղական համայնքի «Քաղցրաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 48,227,534.00 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի «Լեռնապատի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 51,997,805.00 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

8. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղական համայնքի «Վարդաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնել 52,629,919.00 ՀՀ դրամ արժեքով նորակառույց շենքը:

9. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղական համայնքի «Լիճքի առողջության առաջնային պահպանման կենտրոն»

նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու պաթոլոգիաանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերությանը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի «Ախթալայի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նորակառույց շենքը՝ 43,386,733.67 ՀՀ դրամ սկզբնական արժեքով նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի «Ախթալայի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» թիվ 7987-ԱՄ վարկային համաձայնագրի շրջանակներում կառուցված շենքերի հետագա տիրապետումն ու տնօրինումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության

1. **Անհրաժեշտությունը.** «Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» թիվ 7987-ԱՄ վարկային համաձայնագրի շրջանակներում կառուցված շենքերի հետագա տիրապետումն ու տնօրինումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումն պայմանավորված է 2011-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» թիվ 7987-ԱՄ վարկային համաձայնագրի շրջանակներում ՀՀ մի շարք մարզերում կառուցված բժշկական հաստատությունների շենքերի հանձնման և

ընդունման ընթացակարգը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու անհրաժեշտությամբ:

Նախագիծը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգիրքը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները. Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացմանն ու զարգացմանը նպաստող վարկային թիվ 7987-ԱՄ ծրագրի շրջանակներում ՀՀ մարզային բժշկական մի շարք հաստատությունների համար կառուցվել են նոր շենքեր: Կառուցված շենքերը շահառուներին տրամադրվել է տիրապետման իրավունքով, մինչև ծրագրի շրջանակներում ձեռք բերված գույքի սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետությունը որոշում կայացնի գույքը շահառուներին հանձնելու իրավունքի վերաբերյալ:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Որոշման նախագիծը մշակվել է՝ հաշվի առնելով շահառու կազմակերպությունների ենթակայության և կառուցված շենքերի հետագա նպատակային նշանակությամբ օգտագործման հանգամանքը վերահսկելու հնարավորությունը: Ըստ այդմ՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում ներկայում իրականացվող քաղաքականության սկզբունքներով և գործող օրենսդրությամբ, որոշվել է նորակառույց շենքերը ամրացնել պետական ոչ առևտրային կազմակերպություններին և նվիրաբերել փակ բաժնետիրական ընկերություններին և համայնքներին՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացնելու պայմանով: Նշված բոլոր 3 դեպքում էլ սահմանվում են դրույթներ՝ շենքերի հետագա շահագործումն ու նպատակային նշանակությամբ օգտագործման հանգամանքը վերահսկելու համար:

4. Կարգավորման նպատակը և բնույթը. Առաջարկված ՀՀ կառավարության որոշման նախագիծը վերջնականապես հստակեցնում է ծրագրի շրջանակներում կառուցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի տեսակը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից, նախագծի մշակման գործընթացում ներգրավվել են ՀՀ ԱՆ «Առողջապահական ԾԻԳ» պետական հիմնարկի համապատասխան մասնագետները:

6. Ակնկալվող արդյունքը. ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը կնպաստի վարկային ծրագրի շրջանակներում կառուցված շենքերի պահպանմանը ու նպատակային նշանակությանը համապատասխան շահագործմանը, ինչպես նաև կաջակցի դրանց իրավական կարգավիճակի հստակեցման գործընթացին:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝


ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ